

կութիւն եղած է ամէն բան՝ բարի եւ չար, Հայաստանի յիշեալ առաջին Աւետարանէն յառաջ բերել : Ո՞վ կրնայ ասոնցմէ՝ տարակուսիլ որ աս հանգանակն անկէ չըլայ : Այսպէս Փէշտխաւճեան իր “Ղուսաշաւիղին”, մէջ՝ որն որ հանգանակի բացատրութիւն մին է : “Նոյնպէս Մտեր իրեն “Քրիստոնէական վարդապետութեան Հրահանգին”, մէջ, Մատթէոս արքեպիսկոպոս եւ յետոյ Լճմիածնի կաթողիկոս, եւ Յովհաննէս Տէրոյեանց՝ սրբազան իրաց՝ իրենց մէջ ամենէն հմուտը, բոլորովին անկասկած՝ սոյն հանգանակը յայտնուպէս “Ղուսաւորչեան հանգանակ”, թէ կ'անուանեն եւ թէ կը համարին՝ :

Ան աստիճան վերջապէս ընդհանուր եղած է աս ասանկ բացարձակ ստուգութեան տեղ դնել որ 1858ին իրենց Ա-Պոլսոյ Պատրիարքարանի հոգեւոր ժողովէն քննուած եւ հաւանուած Միջակ Վարդապետարանին մէջ մեր առաջիկայ հանգանակը՝ հանգանակաց կարգին մէջ իբրեւ “Հանգանակ Հայաստանեաց Եկեղեցւոյ”, չորրորդ տեղը զետեղելէն ետքը կը հարցուի ուսանողներուն սա հետեւեալը՝ “հ. Մեր հանգանակը ո՞րն է : պ. Մերը՝ Նիկիական Հաւատամքն է սրբոյ Ղուսաւորչէն մերմէ տեղ տեղ պարզուած : հ. Նիկիական Հաւատամքին մէջ տեղ տեղ պարզուածներն որո՞նք են : պ. Ընոնք են՝ որ վերի զրած Հաւատամքին մէջ շղագրով գրուած են : , — Շղագրով գրուած է որ եւ իցէ տարբերութիւն առանց զանազանութեան :

Եւրոպացի մատենագրաց շեղելով՝ յայտնի է որ աս հանգանակը շատ անգամ Հայոց Պատարագամատուցին հետ հրատարակուելով անոնց անձանօթ չմնաց : Եւ Պրէզն Եղօթմանոցի Կարգին երէցը՝ Ն. Փիտու³ զազղեացի թէւադինեան Հայաստանի Քարոզչէն թարգմանութիւն մ՝ ունեցաւ, եւ ան զորձածեց՝ երբ որ իր ծանօթ գրոյն մէջ Հայոց Պատարագամատոյցը զազղելէն հրատարակեց : Հոս կը հաստատէ Եւ-Պրէզն որ Հայաստանեաց եկեղեցին ան եկեղեցեաց թիւէն է՝ որոնք, Ռուսիկնեաց բաժին համեմատ, հարկաւոր համարեցան նոր մոլորութեանց դէմ ինչ ինչ Հանգանակին մէջ աւելցրնել : Անկէ ետքը վեց եօթը կտոր յաւելուած կը նշանակէ զորոնք Հայք աւելցուցած ըլլան առաքելոց հանգանակին վրայ, առնելով Նիկիոյ հանգանակին ծայրի նդովքն ալ Երիւնդոսաց դէմ, բայց աւելցրնելով ասոր մէջ միանգամայն Հողւոյն սրբոյ աստուածութիւնն ուրացողները⁴ : Նման խորհր-

¹ Տես “Երեւակ”, 1865. Փետր. 16, Թիւ 55, էջ 53 :
² Տես էջ 58—61 :
³ Փիտու (Pidou) ծնած է 1637 սեպտ. 8ին : Թէւադինեան կրօնը մտնելէն վերջը 1666ին Պալանտոսն զորձակից եղաւ Լեհաստանի Հայոց մէջ ուղղափառութիւնը

տարածելու : Բարոցութեան գացած է նաեւ ի Պարսո : 1687 անուանուեցաւ Բարեւոնի եպիսկոպոս : Իւր մահկանացուն կնքած է յապահան 1717 Նոյեմբ. 20ին : Ծ. Հրտ. :
⁴ Lebrun : Explication de la messe 1778, էջ 162—168 :